

ՀՈՒՎԱԾՆԵՐ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՆՈՄԻՆԱԼԻԶՄԻ ԵՎ ՌԵԱԼԻԶՄԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ
ՂԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ

Ս. ԶԱՔԱՐՅԱՆ

Վերջին տասնամյակներում միջնադարյան փիլիսոփայության տեսական և աշխարհայացքային պրոբլեմները գնալով ավելի ու ավելի հաճախ են դառնում մանրակրկիտ հետազոտությունների առարկա, որն էլ հնարավորություն է տալիս առավել ստույգ վերարտադրելու փիլիսոփայապատմական պրոցեսի այդ ուրույն փուլի զարգացման ամբողջական պատկերը: Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում միջնադարյան փիլիսոփայության կենտրոնական պրոբլեմներից մեկի՝ ընդհանուր հասկացությունների (ունիվերսալիաների) լուծման շուրջ ծավալված վիճաբանությունների, նոմինալիզմի և ռեալիզմի պայքարի պատմության հետ առնչվող հարցերի ուսումնասիրությունը: Միջնադարյան փիլիսոփայությանը «մեծ պատիվ բերող»¹ պրոբլեմի պատմությունը վաղուց է գրավել մասնագետների ուշադրությունը: Միայն Արևմուտքում, ըսկրած 19-րդ դարից մինչև վերջերս, դրա մասին գրվել են բազմաթիվ հետազոտություններ՝ մենագրություններ և հոդվածներ: Չնայած այն հանգամանքին, որ այս պրոբլեմը սովետական փիլիսոփայապատմական գրականության մեջ նույնպես լուսաբանվել է², այնուամենայնիվ, հարկ է նշել, որ առ այսօր մենք հրապարակի վրա չունենք մի այնպիսի ամփոփ աշխատություն, որտեղ հանճամանորեն ներկայացված լիներ միջնադարյան նոմինալիստների և ռեալիստների պայքարի պատմության ընթացքը: Եվ դա այն դեպքում, երբ ժամանակակից գիտելիքի մակարդակում ընդհանուր հասկացությունների պրոբլեմը դարձյալ մնում է սուր բախումների առարկա³ և, ըստ էության, դեռևս համարվում է «վերջնականապես չլուծված պրոբլեմ»⁴: Ծիշտ է, միջնադարում այդ պրոբլեմի քննարկումը դուրս չեկավ կրոնաաստվածաբանական մտածելակերպի շրջանակներից, ինչպես և երկար ու թեժ վիճաբանությունները փաստորեն չլուծեցին առանձինի և ընդհանուրի, սուբյեկտիվ ընդհանուրի և օբյեկտիվ ընդհանուրի փոխհարաբերության հարցերը, այնուհանդերձ, մարդկային իմացության

¹ Гегель. Сочинения, т. XI, М.-Л., 1935, с. 40.

² Տե՛ս, օրինակ, Օ. Трахтенберг. Очерки по истории западноевропейской средневековой философии. М., 1957, стр. 26—45. Ս. Արևշատյան, *Նոմինալիզմի առաջացումն ու զարգացումը միջնադարյան Հայաստանում*, «Բաների Մտտենադարանի», 1962, № 6, էջ 75—96, Н. Стивеньип. Проблема универсалий в средневековой философии.—«Философские науки», 1980, № 2, с. 108—117.

³ Տե՛ս Ո. Нарский. Проблема универсалий и дискуссия на XVI Всемирном философском конгрессе.—В кн.: Философские и мировоззренческие проблемы современной науки. М., 1981, с. 269—298.

⁴ Г. Левин. Проблема всеобщего в советской философской литературе, «Философские науки», 1985, № 3, с. 150.

պատմութեան համար միջնադարյան մտածողների ձախողումների և որոնումների հետազոտությունն այսօր ոչ միայն պատմական, այլև ճանաչողական մեծ արժեք է ներկայացնում: Այս կապակցութեամբ խոսելով հին հույների և «մեր միջև ընկած» ավելի քան երկու հազարամյակի ըստ էության իդեալիստական աշխարհայացքի ուսումնասիրության կարևորության և մեթոդաբանական դիրքորոշման մասին, Ֆ. Էնգելսը գրում է, որ «խոսքն այստեղ ամենևին էլ այդ երկու հազարամյակների ողջ իդեալական բովանդակությունը պարզապես դեն շրպըրտելու մասին չէ, այլ նրա քննադատության մասին, կեղծ, բայց իր ժամանակի և զարգացման բուն ընթացքի համար անխուսափելի իդեալիստական ձևի շրջանակներում ձևոք բերված արդյունքները այդ անցողիկ ձևից կճպելու մասին»⁵:

Բացի դրանից, փիլիսոփայապատմական պրոցեսի մարքսիստական վերլուծության համար ոչ պակաս կարևորություն ունի միջնադարյան վեճերի ուսումնասիրությունը՝ կապված մատերիալիզմի և իդեալիզմի պայքարի պատմության հետ: Ինչպես հայտնի է, մարքսիզմի դասականները միջնադարյան նոմինալիզմի և ռեալիզմի պայքարի մեջ տեսնում էին մատերիալիզմի և իդեալիզմի պայքարի համանմանություն: Անհրաժեշտ է կոնկրետ վերլուծությունների հիման վրա հիմնավորել և ճշտել այդ «համանմանության» սահմանները: «Մատերիալիզմի պատմության հետ թեկուզ միջնադարյան վեճերի կապը լըրջորեն ուսումնասիրելու համար,— գրում է Վ. Ի. Լենինը,— կպահանջվեր առանձին հետազոտություն»⁶:

Նպատակ չունենալով շարադրելու միջնադարում քննարկված նշանավոր պրոբլեմի պատմությունը, մենք այստեղ կանդորադառնանք միայն այն հարցերին, որոնք փիլիսոփայական գրականության մեջ կամ միանշանակ լուծում չեն ստացել, կամ էլ չեն լուսաբանվել բավարար շահով: Այդպիսի հարցերից մեկն այն է, թե ինչ շահանիշներից ելնելով կարելի է իրարից սահմանազատել ունիվերսալիստների պրոբլեմի լուծման նոմինալիստական, կոնցեպտուալիստական ու ռեալիստական տարբերակները: Առաջին հայացքից ավելորդ է թվում առանձնահատուկ քննարկման առարկա դարձնել այդ «հայտնի» հարցը, բայց փաստերը ցույց են տալիս, որ դրա լուսաբանումը թե՛ տեսական և թե՛ գործնական առումով կարևոր ու տեղին է: Պարզվում է, որ մասնագիտական գրականության մեջ «նոմինալիզմ», «կոնցեպտուալիզմ» և «ռեալիզմ» հասկացությունները միանշանակ չգործածելու պատճառով տարբեր հետազոտություններում միջնադարյան միևնույն մտածողին համարում են ունիվերսալիստների պրոբլեմի լուծման երեք (իսկ երբեմն էլ՝ չորս) տարբերակների հեղինակ: Ինքնին հասկանալի է, որ նման դեպքերում ոչ միայն դժվար է ստույգ որոշել, թե ինչպես է լուծվել պրոբլեմը միջնադարյան այս կամ այն մտածողի կողմից, այլև՝ թե փիլիսոփայական որ ուղղության է մոտենում տվյալ մտածողի դիրքորոշումը:

Օրինակ, Գ. Լեյբ արաբալեզու փիլիսոփաներ Իբն Սինային և Իբն Ռուշդին համարում է նոմինալիստներ⁷: Հետազոտողների գերակշռող մասը արևելյան ճեմականների տեսակետները բնորոշում է որպես շահավոր ռեալիստական⁸: Եթե Բ. Բիխովսկին Իբն Ռուշդին համարում է կոնցեպտուալիստ մտածող⁹, ապա ոմանք էլ գտնում են, որ տվյալ հարցում նա «հետևում է մատերիալիստական

⁵ Ֆ. Էնգելս, *Բնության դիալեկտիկա*, Ե., 1969, էջ 199:

⁶ Վ. Ի. Լենին, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 25, էջ 46:

⁷ Տե՛ս Գ. Լեյբ. *Очерк истории средневекового материализма*, М., 1962, с. 118.

⁸ Տե՛ս В. Соколов. *Средневековая философия*, М., 1979, с. 279, 358.

⁹ Տե՛ս Б. Быховский. *Знаменосец рационального познания*.— «Вопросы философии», 1976, № 11, с. 139.

հայացքի»¹⁰: Հակադրելով Իբն Սինայի տեսակետը միջնադարյան Եվրոպայում տարածված «ոե-ալիզմին», Ա. Սագադեևը գրում է, որ նա պարզապես փորձում է «ընդգծել ընդհանուրի օբյեկտիվությունը»¹¹:

Նույն տարօրինակ պատկերն ենք տեսնում, երբ համեմատում ենք սխուլաստիկայի ականավոր դեմքերից մեկի՝ Դունս Սկոտի, տեսակետի վերաբերյալ եղած կարծիքները: Սովետական որոշ հետազոտողներ «խորաթափանց դոկտորին» համարում են նոմինալիստ¹², իսկ ոմանք՝ կոնցեպտուալիստ¹³, ուրիշներն էլ՝ շափավոր ոեալիստ¹⁴: Որոշ աշխատություններում անգլիացի փիլիսոփայի տեսակետը ներկայացնում են որպես շափավոր ոեալիստական, սակայն հրապարակավ նրան կոչում են նոմինալիստ. «Ի տարբերություն մյուս նոմինալիստների, — կարդում ենք «Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ» գրքում, — Դունս Սկոտը կարծում է, որ ընդհանուրը միայն մտքի արդյունք չէ, այն իր հիմքն ունի բուն իրերի մեջ... բոլոր ձևերը՝ սեռային, տեսակային և եզակի, սկզբնապես գոյություն ունեն աստծու մտքում: Ընդհանուրը գոյություն ունի և իրերի մեջ (որպես նրանց էություն) և իրերից հետո (որպես հասկացություններ, որոնք մեր միտքը վերացարկում է այդ էություններից)»¹⁵: Կտրուկ բնորոշումների կողքին կարելի է հանդիպել ավելի մեղմ ու զգույշ ձևավակերպումների: Իրավացիորեն նկատելով, որ դժվար է պլատոնիզմին հարող օգոստինոսականին համարել նոմինալիստ, Վ. Սոկոլովը փորձում է վերապահում կատարել. «Դունս Սկոտի գոյաբանական մտքի առանձնահատկությունները թույլ չեն տալիս անվերապահորեն նրան դասելու նոմինալիստների թվին: Սակայն, և թե հաշվի առնենք նրա խոր հետաքրքրությունը դեպի անհատական գոյությունը և մարդկային գիտելիքի մասին նրա ուսմունքի բնույթը, ապա դժբանք, համենայն դեպս, հիմք են տալիս «խորաթափանց դոկտորին» մոտեցնելու նոմինալիզմին»¹⁶:

Ավելորդ չէ նշել, որ Արևմուտքի փիլիսոփայական գրականության մեջ Դունս Սկոտին սովորաբար համարում են ոեալիստ: «Դունս Սկոտն ավելի ուժեղ, քան Թովման ընդգծեց ունիվերսալիանների ոեալությունը»¹⁷: «Նա ոեալիստ էր, — անգլիացի մտածողի մասին գրում է Դ. Նոուլսը, — և որոշ իմաստով ավելի արմատական, քան սուրբ Թովման»¹⁸: «Ձևերի մասին նրա ոեալիզմը, — նշում է է. Փիլսոնը, — նախ և առաջ դրսևորվեց նրա նշանավոր «ձևական տարբերակում» ուսմունքի մեջ...»¹⁹:

Նման կարգի օրինակներ կարելի է շատ բերել: Եվ բոլոր դեպքերում մեզ այստեղ մտահոգում է ոչ միայն «նոմինալիզմ», «կոնցեպտուալիզմ» և «ոեալիզմ» հասկացությունների բովանդակության յուրովի մեկնաբանության փաստը, այլև դրա հետ սերտորեն կապված միջնադարյան այս կամ այն մտածողի փիլիսոփայական հայացքների և հասարակական ու գաղափարական դիրքորոշման բնութագրերի հարցը: Անշուշտ, նման կարծիքների «լաբիրինթոսում» ան-

¹⁰ «Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ», Երևան, 1979, էջ 116:

¹¹ А. Сагадеев. Ибн-Сина (Авиценна). 2-е изд., М., 1985, с. 153.

¹² Տե՛ս «Փիլիսոփայական բառարան», Ե., 1975, էջ 316:

¹³ Տե՛ս Բ. Նարսիի, նշվ. աշխատ., էջ 272:

¹⁴ Տե՛ս М. Желнов. Критика гносеологии современного неотомизма. М., 1971, с. 145.

¹⁵ «Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ», էջ 136—137:

¹⁶ Վ. Սոկոլով, նշվ. աշխատ., էջ 401:

¹⁷ А. Штёкль. История средневековой философии. М., 1912, с. 259.

¹⁸ D. Knowles. The Evolution of Medieval Thought. Baltimore, 1962, p. 306.

¹⁹ E. Gilson. History of Christian Philosophy in the Middle Ages. London, 1955, p. 461—462.

հնար է կոնկրետ պատկերացնել, թե ինչպե՞ս և ո՞ւմ միջև է ընթացել պայքարը: Օրինական հարց է ծագում. մի՞թե շկան ընդհանուր շափանիշներ, որոնց միջոցով կարողանայինք հստակորեն իբրարից սահմանազատել պրոբլեմի լուծման նոմինալիստական և ռեալիստական տարբերակները: Իհարկե, այդպիսի շափանիշներ կան: Եվ դրանցից ամենակարևորն ու որոշիչն այն է, թե ինչպիսի պատասխան է տրվում ունիվերսալիաների պրոբլեմի գլխավոր հարցին՝ ի՞նչն է համապատասխանում մեր մտածողության մեջ գտնվող ընդհանուր հասկացություններին իրականության մեջ: «Ունիվերսալիաների պրոբլեմը, — իրավացիորեն գրում է Գ. Լևինը, — դա ինքնին օբյեկտիվ ընդհանուրի պրոբլեմ չէ, ոչ էլ ինքնին սուբյեկտիվ ընդհանուրի պրոբլեմ, այլ սուբյեկտիվ ընդհանուրի և օբյեկտիվ ընդհանուրի համապատասխանության պրոբլեմ: Այդ պրոբլեմն այդպես է հասկացվել Պորփյուրի կողմից, այդպես է լուծվել Բոեցիուսի և միջնադարյան սխոլաստիկների կողմից, այդպես է, ըստ էության, դա հասկացվում և այսօր»²⁰:

Բայց ի տարբերություն ժամանակակից փիլիսոփայության, միջնադարում (խոսքը հիմնականում վերաբերում է արևմտաեվրոպական միջնադարյան փիլիսոփայությանը, որտեղ ռեալիզմ-նոմինալիզմ հակադրությունն ավելի հստակ ձևով է դրսևորվել) ամենայն սրությամբ դրված էր ընդհանուր հասկացությունների գոյաբանական ռեալության իրավակացության հարցը: Երկարատև վիճաբանությունների ընթացքում ձևավորվեցին պրոբլեմի լուծման հիմնականում երկու ուղղություններ՝ ռեալիստական և նոմինալիստական, իրենց բազմաթիվ տարատեսակներով հանդերձ: Ռեալիստները գտնում էին, որ մտածողության մեջ գոյություն ունեցող ընդհանուր հասկացություններին իրականության մեջ համապատասխանում են ռեալ էություններ կամ օբյեկտիվ նմանակներ: Ընդ որում, եթե ռեալիզմի ծայրահեղ թևի ներկայացուցիչներն այդ ռեալ ունիվերսալիաները համարում էին ինքնակա սուբստանցիաներ և անշատում առանձին իրերից, ապա շափավոր ռեալիստներն ընդունելով աստծու մտքի մեջ գտնվող գաղափար-հարացույցների գոյությունը, միաժամանակ պնդում էին, որ դրանք ռեալ կերպով գոյություն ունեն նաև առանձին իրերի մեջ, որպես դրանց էություն, և մարդկային մտածողության մեջ, որպես ընդհանուր հասկացություններ:

Այսպիսով, մտածողությունը նույնացնելով կեցության հետ, մետաֆիզիկորեն լուծելով սուբյեկտիվ ընդհանուրի և օբյեկտիվ ընդհանուրի համապատասխանության հարցը, ռեալիստները ընդհանուր հասկացություններին վերագրում էին գոյաբանական ռեալություն: «Սուրբ ընտանիք» աշխատության մեջ մարքսիզմի դասականները բացահայտելով իդեալիզմի տեսական և իմացաբանական ակունքները, ցույց են տալիս, թե ինչպես է սպեկուլյատիվ, ռեալիստական մտածողությունն իրական առարկաներից ստեղծում մեկ վերացական առարկա (էություն) և դրան վերագրում սուբստանցիոնալ կեցություն. «Երբ ես իրական խնձորներից, տանձերից, գետնամորիներից, նուշից կազմում եմ «պտուղ» ընդհանուր պատկերացումը, երբ ես ավելի հեռու եմ գնում և երկակայում եմ, թե իրական պտուղներից արտածած իմ «պտուղ» («die Frucht») վերացական պատկերացումը ինձնից դուրս գոյություն ունեցող էություն է, ավելին՝ տանձի, խնձորի և այլնի ճշմարիտ էությունն է, ապա ես դրանով, սպեկուլյատիվ լեզվով ասած, «պտուղը» տանձի, խնձորի, նուշի և այլնի «սուբստանցիա» եմ հայտարարում: Հետևապես... Ես ասում եմ, որ այդ իրերի մեջ էականը ոչ թե նրանց իրական, մեր զգայություն-

²⁰ Г. Левин. Природа универсалий и их роль в развитии познания. — В кн.: Ленинская теория отражения в свете развития науки и практики. М., 1981, с. 218.

ներով հայեցվող առկա կեցութիւնն է, այլ այն էութիւնը, որ ես արատրահել եմ դրանցից և խցկել նրանց տակ իմ պատկերացման մեջ եղած էութիւնը՝ «պ տ ու ղ ը»²¹։

Ի հակադրութիւն ռեալիստների, միջնադարյան նոմինալիստները ժխտում էին ցանկացած կարգի ընդհանուրի գոյաբանական ռեալութիւնը, իսկ մեր մտքի մեջ գտնվող ընդհանուր հասկացութիւնները համարում էին սոսկ անուններ, սուբյեկտիվ իրողութիւններ կամ նշաններ։ Ընդ որում, եթե ծայրահեղ նոմինալիստները մերժում էին ընդհանուրի գոյութիւնը մարդկային և աստվածային մտածողութեան մեջ, ապա շափավոր նոմինալիստները (կոնցեպտուալիստները) դրանք ընդունում էին։ Հարկ է նշել, որ մասնագիտական գրականութեան մեջ ունիվերսալիաների պրոբլեմի կոնցեպտուալիստական լուծման գնահատման հարցի շուրջ միասնական տեսակետ գոյութիւն չունի։ Որոշ հետազոտողներ կոնցեպտուալիզմը համարում են նոմինալիզմի շափավոր տարբերակ²², իսկ մյուսները՝ շափավոր ռեալիզմի տարատեսակ²³։ Այս կապակցութեամբ Ս. Արևշատյանը նշում է, որ շափավոր նոմինալիստները շատ ընդհանուր գծեր ունենին շափավոր ռեալիստների հետ, միայն այն տարբերութեամբ, որ նրանք «ուժգնորեն շեշտում էին արիստոտելյան տրամաբանութեան և իմացաբանութեան մատերիալիստական մոմենտները»²⁴։ Հետազոտողները տարածայնում են նաև այն բանում, թե ինչպես է կոնցեպտուալիզմը լուծում մտքի մեջ ընդհանուր հասկացութիւնների կազմավորման հարցը։ Ոմանք կարծում են, որ դա կատարվում է նման²⁵, իսկ մյուսները՝ ընդհանուր հատկանիշների հիման վրա²⁶։ Ն. Կոնդակովի կարծիքով միջնադարյան կոնցեպտուալիստներն ընդունում էին «մինչդիործնական ընդհանուր հասկացութիւններ, կոնցեպտներ, այսինքն՝ իդեալական էութիւններ, որոնք ի սկզբանե գոյութիւն ունեն մարդու մտքի մեջ»²⁷։ Հնարավորութիւն չունենալով խորանալ այս հարցի մանրամասն վերլուծութեան մեջ, մենք այստեղ պաշտպանում ենք այն տեսակետը, ըստ որի միջնադարյան կոնցեպտուալիզմը ժխտում է ցանկացած ընդհանուրի գոյաբանական ռեալութիւնը և գտնում, որ մտքի մեջ ընդհանուր հասկացութիւններն առաջանում են առանձին առարկաների նման հատկանիշների հիման վրա։

Ինչպես տեսնում ենք, միջնադարյան ռեալիզմը նոմինալիզմից տարբերակելու գլխավոր շափանիշն այն է, թե ինչպես է լուծվում ունիվերսալիաների գոյաբանական ռեալութեան հարցը։ Ռեալիզմը, ի հակադրութիւն նոմինալիզմի, ընդունում է ունիվերսալիաների օբյեկտիվ գոյութիւնը իրականութեան մեջ։ Պետք է ասել, որ գոյաբանութեան շրջանակներում այդ ուղղութիւններն իրարից սահմանազատելու շափանիշ կարող է ծառայել նաև այսպես կոչված «անհատականացման սկզբունքը»։ Հաճախ (եթե չասենք առհասարակ) այս կարևոր շափանիշը հետազոտողների կողմից անտեսվում է, մինչդեռ, ինչպես իրավացիորեն նկատում են սովետական փիլիսոփաներ Ա. Կուրանտովը և Ն.

²¹ Կ. Մարխև և Յ. Էնգելս, Սուրբ ընտանիք..., Երևան, 1967, էջ 91։

²² Տե՛ս, օրինակ, Վ. Սոկոլով, Եզվ. աշխատ., էջ 165, նույնի՝ «Концептуализм»,—В кн.: «Философская энциклопедия» т. 3, М., 1964, с. 57. տե՛ս նաև Լ. Միզգոյան, 17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծութիւն, Եր., 1983, էջ 305։

²³ Տե՛ս, օրինակ, Գ. Աիհե, Եզվ. աշխատ., էջ 222։

²⁴ Ս. Արևշատյան, К истории философских школ средневековой Армении (XIV в.), 1980, с. 71.

²⁵ Տե՛ս, օրինակ, Վ. Սոկոլով, Եզվ. աշխատ., էջ 165։

²⁶ Տե՛ս, օրինակ, Վ. Միրումյան, Հովհաննես Սարկավազի աշխարհայացքը, Ե., 1984, էջ 158—170, նաև՝ Գ. Գրիգորյան, Философская мысль в Армении в эпоху развитого феодализма. Е., 1984, с. 60.

²⁷ Н. Ковдаков, Введение в логику. М., 1967, с. 159.

Ստյափկինը, «Այդ հարցի տարրեր մեկնաբանություններում առավել ցայտուն արտահայտվեց նոմինալիզմի և ռեալիզմի միջև եղած ջրբաժանը»²⁸: Բացառելով ընդհանուրի գոյությունն առանձին իրերի մեջ, նոմինալիզմը դրանով իսկ շեմքից դուրս է թողնում «անհատականացման սկզբունքը»: Կարող ենք ասել, որ նոմինալիստի համար առանձին առարկայի գոյաբանական կազմությունը միատարր է. դա նշանակում է, որ առանձին իրերը կազմված են միայն մատերիայից, իսկ այդ մատերիան ամենուր անհատական է, հետևաբար՝ առանձին իրերն ինքնին անհատական են: Փ. Կոպլեսթոնը ճիշտ է նկատում, որ «անհատականացման» պրոբլեմը նոմինալիստի համար կեղծ և անիմաստ պրոբլեմ է²⁹: Ըստ նոմինալիզմի, իրականում ռեալ կերպով գոյություն ունեն առանձին առարկաներ, որոնք օժտված են միայն անհատական հատկանիշներով: Իսկ դա նշանակում է, որ նոմինալիստները նույնացնում են առանձին առարկան եզակի առարկայի հետ: Ահա թե ինչ է դրում այս կապակցությունը Ա. Շեպտուլինը. «Առանձինն ու եզակին նույնական են միայն նոմինալիստների համար: Քանի որ, ըստ նրանց տեսակետի, ընդհանուրը ռեալ կերպով գոյություն չունի և ոչ մի ընդհանրություն չկա առանձին իրերի մեջ, ուստի դրանք ամբողջովին և լիովին եզակի են, այսինքն՝ առանձինի և եզակիի բովանդակությունը լիովին համընկնում են, այստեղից էլ առանձինը և եզակին իրենցից էերկայացնում են միևնույն բանը»³⁰:

«Անհատականացման սկզբունքը» միանգամայն այլ դերով ու նշանակությունը է հանդես գալիս ռեալիստների ուսմունքներում: Չափավոր ռեալիզմը գտնում է, որ առանձին առարկաներն իրենցից ներկայացնում են ձևի (ընդհանուրի) և մատերիայի (անհատականի) միասնություն, այսինքն՝ դրանք ունեն դուալիստական կազմություն: Ձևը պայմանավորում է տվյալ դասի միատեսակ իրերի ընդհանրությունն ու որոշակիությունը, իսկ մատերիան որպես անհատականացնող սկիզբ, այդ իրերը սահմանազատում է իրարից: Առանձին իրերի մեջ նյութականացված ընդհանուրը որպես աստվածայինի «լիզոր ներկայացուցիչ» մի կողմից ապահովում է դրանց միասնությունը, մյուս կողմից՝ գոյաբանական փաստ է հանդիսանում աստծու կեցության ապացուցման համար:

Ինչպես տեսնում ենք, թե՛ նոմինալիզմը և թե՛ չափավոր ռեալիզմը ընդունում են մարդկային մտածողությունից դուրս գտնվող առանձին առարկաների ռեալ գոյությունը: Դա ընդունում է նաև դիալեկտիկական մատերիալիզմը: Հետևաբար, առանձին առարկաների ռեալ գոյության ընդունումից դեռևս չի բխում, ինչպես կարծում են որոշ հետադոտողներ, որ տվյալ տեսակետը նոմինալիստական է: Այս հարցում նոմինալիզմի տարբերությունը ռեալիզմից և մատերիալիզմից այն է, որ նոմինալիզմն ընդունում է միայն անհատական հատկանիշներով օժտված առարկաների ռեալ գոյությունը: Ճիշտ է, ռեալիզմի համար էլ առանձին առարկաները ռեալ են ու անհատական, բայց այդ անհատականը թվացյալ է և իր ռեալությունը ստանում է ավելի ռեալ գոյաբանական տարրից՝ աննյութական ընդհանուր սուբստանցիայից, որը անփոփոխ նույնությամբ գտնվում է միևնույն դասի բոլոր իրերի մեջ: Մարքսիստական տեսակետը սկզբունքորեն տարբերվում է ինչպես նոմինալիզմից, այնպես էլ ռեալիզմից: Ընդունելով միջնադարյան նոմինալիզմի հարաբերական առաջադիմականությունը սխոլաստիկական ռեալիզմի դեմ նրա մղած պայքարում, դիալեկտիկական մատերիալիզմը ի հակադրություն նոմինալիզմի, գտնում է, որ ընդհանուրը որպես առանձին առարկայի հատկանիշ նույնպես ռեալ կերպով գո-

²⁸ А. Курантов, Н. Стяжкин. Уильям Оккам. М., 1973, с. 145.

²⁹ St' u F. Copleston. A History of Medieval Philosophy. London. 1972. p 246г.

³⁰ А. Шептулин. Диалектика единичного, особенного и общего. М., 1973, с. 119

յություն ունի իրականության մեջ. «առանձինը գոյություն չունի այլ կերպ,— գրում է Վ. Ի. Լենինը,— քան այն կապի մեջ, որը տանում է դեպի ընդհանուրը: Ընդհանուրը գոյություն ունի միայն առանձինի մեջ, առանձինի միջոցով»³¹:

Ինչպես տեսնում ենք, այս հարցում գոյաբանական ռեալիզմի և գոյաբանական նոմինալիզմի միջև եղած տարբերություններն այնքան ակնհայտ են, որ մեկը մյուսի հետ շփոթելը պարզապես անհնարին է: Ուստի, այն հետազոտողները, ովքեր միջնադարյան այս կամ այն մտածողին համարում են նոմինալիստ կամ ռեալիստ, պետք է հստակորեն ցույց տան այդ մտածողի նոմինալիստական կամ ռեալիստական գոյաբանության առանձնահատկությունները:

Ընդհանուր հասկացությունների պրոբլեմի նոմինալիստական և ռեալիստական լուծումների տարբերությունները դրսևորվում են նաև իմացաբանության բնագավառում: Ընդհանուրի գոյաբանական ռեալիստական հարցի լուծումը պայմանավորում է յուրաքանչյուր ուղղության իմացության տեսության բնույթը:

Միջնադարյան նոմինալիզմի իմացաբանությունը սենսուալիստական էր և, հայտնի իմաստով, պարունակում էր սուբյեկտիվիզմի և ագնոստիցիզմի սաղմեր, որոնք առավել ցայտունորեն դրսևորվեցին հետագայում՝ նոր փիլիսոփայության մեջ: Միջնադարում ռեալիստները մեղադրում էին նոմինալիստներին այն բանում, որ վերջիններս դուրս չէին գալիս զգայական-մարմնական պատկերացումների շրջանակներից: Քննադատելով այս հարցում ստոյիկների նոմինալիստական միտում ունեցող դիրքորոշումը, Դավիթ Անհաղթը գրում է, թե «իմացության բնագավառում նրանք մնացին զետնին գամված և խղճուկ, ասելով՝ թե բոլոր (իսկալիստ) շոյերը մարմիններ են»³²: «Այս փիլիսոփաների հոգում,— նոմինալիստների մասին գրում է Անսելմ Քենտրբերացին,— բանականությունը, որ պարտավոր է մարդկանց մեջ գոյություն ունեցող ամեն ինչի ուղեցույց և դատավոր լինելու, այնպես է խորասուզվել մարմնական պատկերացումների մեջ, որ ոչ կարողանում է դրանցից ազատվել և ոչ էլ՝ դրանցից տարբերակել այն իրերը, որոնք իրենց ներհատուկ մաքրությամբ պիտի լինեն հայեցողության առարկա»³³:

Այսպիսով, նոմինալիստները գիտելիքի աղբյուրի հարցում սահմանափակվում էին միայն զգայարանների հաղորդած տվյալներով (որովհետև կեցությունն ամբողջապես զգայական-անհատական է), իսկ ռեալիստները գիտելիքի աղբյուր էին համարում նաև բանական իմացությունը (որովհետև իրերի զգայական հատկությունների խորքում «ընկած» է աննյութական ընդհանուրը): Նոմինալիզմի համար բանականության խնդիրը ոչ թե իրերի էության մեջ թափանցելն է (նոմինալիզմի «ածելին» մեթոդում է այդպիսի ավելորդ էությունների գոյաբանական ռեալիստները), այլ միայն՝ զգայական տվյալների մշակումն ու դասակարգումը: Ընդհանուր հասկացությունները դրկելով գոյաբանական բովանդակությունից, միջնադարյան նոմինալիզմը կանգնեց մտածողությունը կեցության հետ համապատասխանեցնելու բարդ խնդրի առջև:

Ի տարբերություն նոմինալիզմի, ռեալիզմը գտնում էր, որ մտածողության մեջ ընդհանուր հասկացությունները ստեղծվում են առանձին իրերի մեջ գրտնրվող ընդհանուրի վերացարկման միջոցով: Միջնադարում, հատկապես Արիստոտելին և արաբալեզու մտածողներին «հայտնագործելուց» հետո, սենսուալիստական բնույթ ունեին նաև ռեալիստների ուսմունքները: Ավելին, ինչպես նշում է Ա. Ախուտինը, ուշ սխոլաստիկային բնորոշ էր նույնիսկ փորձնական հետազոտությունների յուրատեսակ մի պաթոս, որը հիմք է տալիս խոսելու

³¹ Վ. Ի. Լենին, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 29, էջ 390:

³² Դավիթ Անհաղթ, *Երկեր*, Ե., 1980, էջ 152:

³³ *Մեջբերումն ըստ՝* M. H. Carré. *Realists and Nominalists*. Oxford. 1946. p. 41.

«սխալաստիկական էմպիրիզմի» գոյութեան մասին³⁴։ Իհարկե, այլ բան է, թե այդ զգայական տեսութիւններն ինչ դեր էին խաղում իմացութեան պրոցեսում կամ թե ինչպիսի բնույթ է ուղղվածութիւն ունեին այդ փորձնական հետազոտութիւնները, ինչպիսի խնդիրներ դրանք պիտի կատարեին տվյալ պատմամշակութային համակարգում։ Ռեալիստների համար բուն իմացութեան տեսակետից անարժեք զգայական ճանաչողութեան խնդիրն էր ապամատերիականացնել առանձին առարկան, այսինքն՝ դրա կառուցվածքից հանել «անհատականացնող» սկիզբը, և դրանով իսկ հնարավորութիւն տալ բանականութեանը հայելու ընդհանուր սուբստանցը։ Այս կապակցութեամբ մարքսիզմի դասականները վերոբերյալ հատվածում գրում են հետևյալը. «Ճիշտ է, զգայութիւնների մեջ իր աջակցութիւնը գտնող իմ վերջնական դատողութիւնը խնձորը տարբերում է տանձից և տանձը՝ նուշից, բայց իմ սպեկուլյատիվ բանականութիւնը այդ զգայական տարբերութիւնը հայտարարում է ոչ-էական և նշանակութիւն չունեցող։ Սպեկուլյատիվ բանականութիւնը խնձորի մեջ տեսնում է նուշն և բանը, ինչ որ տանձի մեջ, տանձի մեջ՝ նուշն բանը, ինչ որ նուշի մեջ, այն է՝ «պտուղը»։ Իրենց առանձահատկութիւններով տարբեր իրական պատուհները այսուհետև սոսկ պատրանքային պտուղներ են, որոնց ճշմարիտ էութիւնը «պտուղ», «սուբստանցիան» է»³⁵։ Այս իմաստով ռեալիստների սենսուալիզմը երբևէն անվանում են ձևական կամ «հակասենսուալիստական»³⁶։

Դժվար չէ տեսնել, որ իմացաբանութեան շրջանակներում նույնպես անհնարին է շփոթել ունիվերսալիաների պրոբլեմի նոմինալիստական և ռեալիստական լուծումները։ Բնականաբար, նման տարբերութիւններ կարող ենք գտնել նաև տրամաբանութեան մակարդակում։ Այս կապակցութեամբ արժեքույց տալ, թե ինչ ազդեցւած գոյութիւն ունեն միջնադարյան նոմինալիզմի և արիստոտելիզմի միջև, որովհետև երբևէն այս կամ այն մտածողին հետևողական արիստոտելական համարելով, միաժամանակ նրան անվանում են հետեւողական նոմինալիստ։ Մեր կարծիքով, դրանց միջև էական տարբերութիւններ կան։ Նոմինալիզմը, որպէս իմացաբանական հոսանք, մեկնաբանելով Արիստոտելի ուսմունքը, հայտնի իմաստով շեղվեց նրա գոյաբանական իմացաբանութիւնից։ «14-րդ դարը արիստոտելիզմի շատ դրույթների քննադատական վերանայման շրջան էր, — եվրոպական միջնադարյան փիլիսոփայութեան մասին գրում է Վ. Զուբովը, — վերանայում, որը հաճախ կատարվում էր հենց արիստոտելիզմի դիրքերից, նրա իսկ հնարներով և միջոցներով»³⁷։ Այս միտքն առաջին հերթին վերաբերում է 14-րդ դարի նոմինալիստական ուղղութեանը, որը մի կողմից՝ հենվում էր արիստոտելյան որոշ ավանդույթների վրա, մյուս կողմից, հիմքից խարխուլում արիստոտելյան փիլիսոփայութեան հենքի վրա բարձրացած կրօնական ռացիոնալիզմի սխալաստիկական ուսմունքները։ Արիստոտելի, ինչպէս և նրա հետևորդների համար, տրամաբանական կատեգորիաները միաժամանակ գոյի կատեգորիաներ էին, այսինքն՝ դրանք առանձին իրերին հատուկ ընդհանուր, էական կողմերի իմացաբանական-տրամաբանական արտահայտութիւններն էին։ Իսկ նոմինալիստների համար ունի-

³⁴ СЕУ А. Ахутин. История принципов физического эксперимента от античности до XVII в., М., 1976, с. 147—149.

³⁵ Կ. Մարքս և Ֆ. էնգելս, նշվ. աշխատ., էջ 92։

³⁶ СЕУ Р. Радев. Критика неотомизма. М., 1975, с. 103—111.

³⁷ В. Зубов. Пространство и время у парижских номиналистов XIV в.—В кн.: «Из истории французской науки». М., 1960, с. 3.

վերսալիաները սոսկ մտային ֆիկցիաներ էին, նշաններ, որոնք չէին արտացոլում մտքից դուրս գտնվող առանձին իրերին բնորոշ ընդհանուր հատկանիշները, կապերը և հարաբերությունները: Այս իմաստով, ինչպես իրավացիորեն նկատում է Մ. Քարրեն, նոմինալիզմն ավելի շուտ հակվում է ստոյիկների դիրքորոշմանը, քան արիստոտելյան ուսմունքին³⁸:

Փաստորեն, մերժելով ընդհանուր էությունների գոյությունը առանձին իրերի մեջ, միջնադարյան նոմինալիզմը դրանով իսկ հանդես եկավ որպես մետաֆիզիկական համապարփակ ուսմունքների գերեզմանափոր: Այդ պատճառով ռեալիստներն առիթ բաց չէին թողնում ի ցույց հանելու նոմինալիստների «աքիլլեսյան գարշապարը»: Եթե բանականությունը գործ շունի ռեալ օբյեկտների հետ, ասում է Թովմա Աքվինացին, ապա «գիտությունները պիտի ուսուցանեն ոչ թե իրերի, այլ մտահասանելի կերպարների մասին»³⁹: Ժխտելով ընդհանուրի ռեալ գոյությունը, գրում է Դոնս Սկոտը, մենք դրանով իսկ բոլոր գիտությունները կհանգեցնենք տրամաբանության՝ ջնջելով մետաֆիզիկայի և տրամաբանության միջև եղած տարբերությունները⁴⁰:

Մենք ցույց տվեցինք, թե ունիվերսալիաների պրոբլեմի նոմինալիստական և ռեալիստական լուծումներն ինչպես են տարբերվում գոյաբանության, իմացաբանության և տրամաբանության շրջանակներում: Բայց տեսական սխեման չպետք է շփոթել կոնկրետ վերլուծությունների հետ: Զուտ, ավարտուն նոմինալիստական և ռեալիստական տեսություններ միջնադարում և, ընդհանրապես փիլիսոփայության պատմության մեջ, դժվար է գտնել, իսկ նոմինալիստական, կոնցեպտուալիստական և ռեալիստական դրույթներ ցանկացած մտածողի մոտ կարելի է հանդիպել: Այս իմաստով իրավացի է Ս. Ալլահվերդյանը, երբ գրում է, որ «նոմինալիզմ կամ ռեալիզմ սկզբունքով կտրուկ դասակարգման բացարձակացումն այս կամ այն մտածողի նկատմամբ կարող է վերածվել նրանց հայացքների պարզունականացմանը կամ խեղաթյուրմանը...»⁴¹: Ուստի, այս կամ այն մտածողի տեսակետը բնութագրելու համար անհրաժեշտ է հաշվի առնել պրոբլեմի լուծման ընդհանուր միտումը, ելակետային հիմնարար սկզբունքները:

Ամփոփենք արդյունքները: Փիլիսոփայապատմական գրականության մեջ «նոմինալիզմ», «կոնցեպտուալիզմ» և «ռեալիզմ» հասկացությունները միանշանակ չգործածելու հետևանքով ստեղծվել է մի այնպիսի վիճակ, երբ տարբեր հետազոտություններում միջնադարյան միևնույն մտածողին համարում են ունիվերսալիաների պրոբլեմի լուծման երեք տարբերակների հեղինակ:

Մեր նպատակն էր ցույց տալ, թե ինչ շափանիշներից ելնելով կարող ենք իրարից սահմանազատել պրոբլեմի նոմինալիստական և ռեալիստական լուծումները: Որպես գլխավոր շափանիշ ընդունեցինք այն, թե ինչպես է վճռվում միջնադարյան վիճաբանությունների կենտրոնական հարցը՝ ունիվերսալիաների գոյաբանական ռեալության, սուբյեկտիվ ընդհանուրի և օբյեկտիվ ընդհանուրի համապատասխանության հարցը: Գոյաբանության շրջանակներում (այստեղ լրացուցիչ շափանիշ կարող է ծառայել նաև այսպես կոչված «անհատականացման սկզբունքը»), նոմինալիզմը և ռեալիզմը հակադիր դիրքերից են լուծում այդ հարցը, որն էլ տրամաբանորեն պայմանավորում է յուրաքանչյուր ուղղության իմացաբանության և տրամաբանության առանձնահատկությունները:

³⁸ Տե՛ս այդ մասին Մ. Քարրե, նշվ. աշխատ., էջ 115—116:

³⁹ Մեջբերումն ըստ՝ «Литология мировой философии». Т. 2, т. 2, М., 1962, 1962, с. 848.

⁴⁰ Տե՛ս է. Ժիլսոն, նշվ. աշխ., էջ 462, 487:

⁴¹ С. Аллахвердян. Дилемма номинализма и реализма и кризис буржуазной социологии.—«Вопросы философии», 1983, № 10, с. 138.

С. А. ЗАКАРЯН.—К вопросу о характеристике средневекового номинализма и реализма.—Статья посвящена проблеме характеристики средневекового номинализма и реализма, в частности, критериям различения этих двух основных направлений в решении проблемы универсалий. На основе сравнительного анализа имеющихся точек зрения, автор приходит к выводу, что в научной литературе понятия «номинализм», «концептуализм» и «реализм» зачастую используются неоднозначно, вследствие чего в разных работах одного и того же средневекового философа называют то номиналистом, то реалистом, то концептуалистом. Автор пытается обосновать положение о том, что определяющим критерием различения этих направлений может служить решение вопроса об онтологическом статусе универсалий. По его мнению, в рамках онтологии и гносеологии дополнительным критерием различения номинализма и реализма является также «принцип индивидуализации».